01/10.1/9308-10
2010-08-09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Լարիսա Ալավերդյանի, Անահիտ Բախշյանի, Ռաֆֆի Հովհաննիսյանի, Արմեն Մարտիրոսյանի, Ստյոպա Սաֆարյանի և Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած <<Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին օրենքի նոր նախագիծ, որի հայեցակարգի համաձայն պետք է հստակեցվեն տոների և հիշատակի օրերին վերաբերող միասնական սկզբունքներն ու չափանիշները։ Նշված օրենքի նախագիծն այժմ քննարկվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի օգոստոսի 27-ի N 719-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբում և կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության հեղինակներին առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված նախագծի

քննարկումից և դրան անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացվելիք նախագծի քննարկումների համատեքստում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-946-09.07.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «ՀՀ տոների եւ հիշատակի օրերի մասինե Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10.1 հոդվածից հետո լրացնել նոր 10.2 հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*ՀՈԴՎԱԾ 10.2.* Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օր՝ նշվում է հունիսի 29-ին։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման առարկան .

Սույն նախագծի կարգավորման առարկան Հայաստանի նորանկախ պետականության պաշտպանության ու կայացման, ինչպես նաեւ Արցախի հերոսամարտում հայոց հաղթանակի համար իրենց դրական դերակատարումն ունեցած անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրվա ամրագրումն է «ՀՀ տոների եւ հիշատակի օրերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում։

2. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը) .

ՀՀ օրենքով ամրագված կարգով նշվում է Երկրապահի օրը՝ մայիսի 8-ը։ Սակայն անհայտ կորած ազատամարտիկներին հարկավոր է այլ կարգավիճակով դասակարգել, քանի որ նրանց կարգավիճակը, ըստ էության, տարբերվում է կենդանի կամ զոհված ազատամարտիկների կարգավիճակից, հետեւաբար նաեւ սխալ է նույնացումը հայրենիքի պաշտպանության համար նահատակված կամ մահացած զինվորների կարգավիճակի հետ։ Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ ու ելնելով անհայտ կորած զիվորների վերաբերյալ Ժնեւյան կոնվենցիայի հիմնադրույթներից՝ «անհայտ կորած ազատամարտիկիե կարգավիճակին համապատասխան հիշատակի օր ամրագրել «ՀՀ տոների եւ հիշատակի օրերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում։

2.2 Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները.

Անհայտ կորած ազատամարտիկների օրը թե՛ Հայաստանի, թե՛ ԼՂ հանրապետությունների կառավարական ու հասարակական մակարդակներով դե ֆակտո նշվում է 2001թվականից սկսյալ։ Այժմ ունենք 2000թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ Կառավարության N663 որոշումը, որով հունիսի 29-ը սահմանված է որպես անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օր։ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նույնպես ունի Կառավարության որոշում՝ ընդունված 1999թ. մայիսի 19-ին, որով հունիսի 29-ը հայրենիքի համար նախատակված եւ անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրն է։ ԼՂՀ-ն սակայն սույն որոշման հիման վրա 2001թ.

մայիսի 26-ին անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրն ամրագրել է «ԼՂՀ տոների եւ հիշատակի օրերի մասինե օրենքի 11-րդ հոդվածում (ԼՂՀ, ՀՕ-149)։ ՀՀ օրենսդրության մեջ որոշումը դեռեւս օրենքի չի վերափոխվել։

2.3. Առկա խնդիրի առաջարկվող լուծումները.

Նախագիծը նպատակ ունի ՀՀ Կառավարության գործող որոշումն ամրագրել օրենքով։

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Սույն նախագծի կիրառման արդյունքում հստակեցում կմտնի անհայտ կորած ազատամարտիկների կատեգորիայի հարցում։ Սույն նախագծի ընդունումը կարեւոր է անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների, ժառանգների եւ առհասարակ հասարակության համար։ Նախագծի կիրառմամբ օրենքով կամրագրենք գիտակցությունն առ այն, որ հայրենիքի ու նրա շահերի պաշտպանության համար կյանքը նվիրաբերած ազատամարտիկների հանդեպ հարգալից վերաբերմունքն ու նրանց գործի հիշատակումը այսօրվա եւ վաղվա յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է։ Սույն նախագծի կիրառումը նաեւ կարեւոր քայլ կլինի սերունդներին հայրենասիրական ոգով դաստիարակելու համար։